Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն
ԱԲ ավագ դպրոցի ընդունելության քննություններ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ **2026 թ. ապրիլ**
Տևողություն՝ **1 ժամ 15 րոպե**

ԳԾԱԿՈԴ

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Բոլոր պատասխանները գրել այս քննաթերթիկի մեջ՝ համապատասխան տեղերում:
Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:
Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Այս փաստաթուղթը բաղկացած է **7** տպագիր և **1** դատարկ էջերից:

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

Հայոց լեզու

1. Անհրաժեշտ տեղում լրացրո՛ւ բաց թողած տառերը.

Մոնակոյի տարածքն ընդամենը մեկուկես քառակուսի կիլոմետր է: Այս պետությունը գտնվում է Միջերկրական ծովի հարավարևելյան ափին: Բնակիչները կոչվում են մոնեգասկներ, որոնք ֆրանսիացիների և իտալացիների խառնուրդ են, իսկ պաշտոնական լեզուն ֆրանսերենն է:

Մոնակոյի արևադարձային յուրօրինակ կլիման, հուռթի բնությունը, Միջերկրականի ականակիտ ջրերն ու բարեկարգ լողափերը, հայտնի խաղատունն ու օվկիանոսագիտական ապշեցուցիչ թանգարանը աշխարհի բոլոր կողմերից դեպի իրենց են ձգում անհագուրդ հետաքրքրասիրությամբ համակված միլիոնավոր զբոսաշրջիկների: Բոլորը ցանկանում են տեսնել այս ամենը: Մոնակոն, ***իհարկե,*** դյութում և ուրախացնում է իր հյուրերին:

Պետության անզուգական, չնաշխարհիկ մայրաքաղաքում է գտնվում աշխարհահռչակ խաղատունը, որը չորս կողմից շրջապատված է բարձրակարգ հյուրանոցներով: Ուշադրություն է գրավում այն իրողությունը, որ այդ երկրում ապօրինությունները կանխելու համար կա դատարան, բայց չկան բանտեր, այդ պատճառով էլ անօրեն հանցագործներին ուղարկում են Ֆրանսիայի բանտերը՝ իրենց մեղքերը քավելու և ապաշխարելու: Մոնակոյի բանակը, որքան էլ տարօրինակ է թվում, բաղկացած է տասներկու զինվորից և միմիայն մեկ գնդապետից:

Մեր թվարկությունից առաջ փյունիկեցի վաճառականները ներկայիս Մոնակոյի տեղում ամրոց էին հիմնել: Հետագայում՝ քրիստոնեական շրջանում, այդ հինավուրց ամրոցի փոխարեն կառուցվել է գմբեթարդ մի վանք, որն էլ անուն է տվել այս պետությանը, որովհետև լատիներեն «մոնակուս» բառը նշանակում է վանք:

5 միավոր

2. Գրի՛ր տրված բառերի հոմանիշները: Յուրաքանչյուրի համար նշի՛ր նաև մեկ հականիշ.

Չնաշխարհիկ – անզուգական, սքանչելի / հասարակ, սովորական, անշուք———————————

Աշխարհահռչակ - հանրածանոթ, հանրահայտ, մեծահամբավ / անհայտ, անծանոթ, անանուն-————

հիմնել – հիմնադրել, ստեղծել / քանդել, ոչնչացնել, կործանել ——————————————

շրջապատել - պաշարել, բոլորել / ազատել, բացել ——————————————————————

2 միավոր

3. Տեքստից դո՛ւրս գրիր տրված կաղապարներին համապատասխան երկուական բառ.

Արմատ+հոդակապ+արմատ ——խաղատուն, հանցագործ——————————————

նախածանց+արմատ+վերջածանց —— անհագուրդ, անզուգական ——————————

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

արմատ+հոդակապ+արմատ+վերջածանց —— արևադարձային, զբոսաշրջիկ——————

արմատ+վերջածանց —— բնություն, հյուրանոց——————————————————————————------

2,5 միավոր

4. Տեքստում գտի՛ր 2 բարդածանցավոր բառ, որոնցից մեկն ունի գոյականով արտահայտված երկվանկ արմատ, իսկ մյուսը՝ բայարմատ: Դո՛ւրս գրիր այդ բառերը և ընդգծի՛ր արմատները:

Արևադարձային_____
_____

ուշադրություն_____

0,5 միավոր

5. Տեքստից դո՛ւրս գրիր ե խոնարհման 1 անկանոն բայ, 1 պատճառական բայ, կազմի՛ր այդ բայերի սահմանական եղանակի անցյալ կատարյալ և հրամայական եղանակի ապառնի ժամանակաձևերը (բայերը գործածի՛ր եզակի թվով, 1-ին դեմքով, դրական և ժխտական խոնարհումով):

անկանոն բայ – տեսնել, պատճառական բայ - ուրախացնել

սահմանական եղանակ, անցյալ կատարյալ ժամանակաձև - տեսա, չտեսա // ուրախացրի, չուրախացրի

հրամայական եղանակ – տե՛ս, մի՛ տես // ուրախացրո՛ւ, մի՛ ուրախացրու

1,5 միավոր

6. Որոշի՛ր տեքստում ընդգծված բառերի (8 բառ) խոսքիմասային պատկանելությունը և գրի՛ր դրանք ներքևում տրված համապատասխան տողում: Լրացրո՛ւ փակագծերում նշված հատկանիշները, անհրաժեշտության դեպքում նշի՛ր նախադասության մեջ շարահյուսական պաշտոնը:

Գոյական (հոլովը, հոլովումը) - ***հետաքրքրասիրությամբ***

ածական (տեսակը, կազմությունը) - ***օվկանոսագիտական***

դերանուն (տեսակը, հոլովը) - ***իրենց***

բայ (եղանակը, ժամանակաձևը, դեմքը) - ***կառուցվել է***

մակբայ (տեսակը, կազմությունը) - ***ընդամենը***

կապ (տեսակը) - ***դեպի***

շաղկապ (տեսակը) - ***որովհետև***

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

վերաբերական (տեսակը) - ***իհարկե***

2 միավոր

7. ա. **Շարունակի՛ր միտքն այնպես, որ նախադասությունը լինի՝**

1/ բարդ համադասական

Մենք ուսումնասիրում էինք հայրենի լեռնաշխարհի՝ հիացմունք պարգևող պատմական հուշարձանները, ճարտարապետական կոթողները և հիանում մեր հարուստ ճառանգությամբ, գեղեցիկ մշակույթով:

_____

_____

2/ բարդ ստորադասական

Մենք ուսումնասիրում էինք հայրենի լեռնաշխարհի՝ հիացմունք պարգևող պատմական հուշարձանները, ճարտարապետական կոթողները, որովհետև ուզում էինք ամեն ինչ իմանալ մեր պատմական ժառանգության, գեղեցիկ մշակույթի մասին:

_____

_____

բ. **Կազմի՛ր բարդ ստորադասական նախադասություն՝ անհրաժեշտ շարահյուսական փոփոխությունների ենթարկելով տրված բառերը, ճիշտ դասավորելով և շաղկապներ ավելացնելով:**

Լավ, պիտի, մենք, ուսումնասիրել, լեռնաշխարհ, հայրենի, հուշարձան, ճարտարապետական, կարողանալ, սերունդ, մշակույթ, հաջորդ, փոխանցել, կոթող:

Մենք պիտի լավ ուսումնասիրենք հայրենի լեռնաշխարհի հուշարձանները, ճարտարապետական կոթողները, որպեսզի կարողանանք մեր մշակույթը փոխանցել հաջորդ սերունդներին:

1,5 միավոր

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

8. Կետադրի՛ր տեքստը:

Ցնցող մի դեպք էր կատարվել՝ անակնկալի բերելով ճահճային գաղջ աշխարհում բնակվող ծառերին, որոնք ուտում էին, փթթում, երբեմն փտում՝ չձգտելով ոչնչի: Այնինչ ըմբոստ մի ծառ՝ առույգ, առողջ ոստերով, քամահրելով արգելքները, ճեղքելով հողի՝ դարերի ընթացքում կոշտացած կուրծքը, անվրդով բարձրանում էր վեր՝ դեպի ամպշող լեռները, սուրսայր գագաթները՝ ծաղրանքով քրքջալով ներքևում՝ տիղմի մեջ խարխափող իր խաբված ընկերների վրա:

- Բարձրանո՞ւմ ես, - ապշեց հնօրյա կաղնին, - իսկույն ևեթ իջի՛ր, անմի՛տ, դու կոչնչանաս:

- Փույթ չէ, կայրվեմ վերևում:

Եվ իրոք, կանխագուշակությունը կատարվեց: Մի մրրկահույզ օր կայծակից ծառն այրվեց. ճարճատում էր, տնքում, բայց բարձունքներում էր:

3 միավոր

9. Գտի՛ր և ուղղի՛ր սխալները այն նախադասություններում, որտեղ դրանք առկա են (բառագործածության, խնդրառության, համաձայնության):

ա. Տեղի ունեցածի մասին թույր կարծիք էր տարածվել, և բոլորը շփոթվել էին:

Տեղի ունեցածի մասին թյուր կարծիք էր տարածվել, և բոլորը շփոթվել էին:

բ. Ականակիտ խավարում հնարավոր չէր որևէ բան տեսնել և հասկանալ, թե ինչ է կատարվում:

Ականակիր խավարում հնարավոր չէր որևէ բան տեսնել և հասկանալ, թե ինչ է կատարվում:

գ. Միքայելը հետևեց նրան դողդոջուն քայլերով:

Միքայելը հետևեց նրան դողդոջուն քայլերով:

դ. Մորս աչքերում կար հոգնությունը թաքցնող ժպիտ և մայրական սիրո քնքշանք:

Մորս աչքերում կային հոգնությունը թաքցնող ժպիտ և մայրական սիրո քնքշանք:

ե. Պիտի ուշադիր լինենք, հսկենք նրա բոլոր քայլերին և տեղեկացնենք տնօրենին:

Պիտի ուշադիր լինենք, հսկենք նրա բոլոր քայլերը և տեղեկացնենք տնօրենին:

2 միավոր

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

Լեզվամտածողություն

1. **Ինչպիսի՞ն է մեր մշակույթը: Ինչպե՞ս մենք պիտի պահպանենք այն և փոխանցենք հաջորդ սերունդներին: Կարծիքդ արտահայտի՛ր 3 բարդ նախադասությամբ (համադասական և ստորադասական):**

3 միավոր

2. **Հայ ժողովուրդը միշտ փորձել է պահպանել իր մշակույթը: Ինչո՞ւ է մշակույթի պահպանումը կարևոր ժողովրդի կյանքում: Մտքերդ շարադրի՛ր 2 պարզ ընդարձակ և 2 բարդ նախադասությամբ:**

2 միավոր

3. ***Աղանդ* և *աղանդեր* բառերով կազմի՛ր մեկական նախադասություն:**

2 միավոր

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

4. *Սուր* և *քաղցր* բառերը գործածի՛ր նախադասություններում ուղիղ և փոխաբերական իմաստներով:

Ուղիղ _____
փոխաբերական _____
ուղիղ _____
փոխաբերական _____

2 միավոր

5. *Բաժակ* և *քամի* բառերից յուրաքանչյուրով գրի՛ր 2-ական դարձվածք և դրանցից 2-ով կազմի՛ր նախադասություններ:

Բաժակ բարձրացնել – կենաց առաջարկել,

բաժակը լցվել - համբերությունը հատնել, այլևս չկարողանալ համբերել,

քամի անել - փչել, սուտ խոսել, պարծենալ,

քամու բերած - հեշտությամբ ձեռք բերված, պատահաբար գտած:

_____

_____

_____

2 միավոր

6. Բառաշարքում ընդգծի՛ր համանունները և դրանցից մեկը երկու տարբեր իմաստներով գործածի՛ր նախադասություններում:
Մատիտ, պարս, օդ, ճեղքեր, երգ:

1 միավոր

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

ԴԱՏԱՐԿ ԷՋ

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն